

«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (№ 4)

31 մարտի 2017թ.

Ժամը՝ 15⁰⁰

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի ընդունված հիմնադրամի և «Խոսքի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի» ծրագրի մասին:
(Նունե Հովհաննիսյան)
2. «Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամի կողմից իրականացվող «Սորս» տնակ» զարգացման, խնամքի և ժամանցի սոցիալական» ծրագրի մասին:
(Մարինա Պարազյան)
3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Գետափ համայնքում ոռոգման ջրագծի կառուցում» ծրագրի մասին:
(Բենիամին Աղամալյան)
4. «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մանկապարտեզների մասնակի կահավորում» ծրագրի մասին:
(Աշոտ Վարոսյան)
5. Բեռլինի Կարմիր խաչի «Ֆյուր Արմենիեն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու Բեռլին պոլիկլինիկայում այլընտրանքային էներգիայով աշխատող ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագրի մասին:
(Ալեքսան Տեր-Մինասյան)
6. «Ալբերտ Սեփինս» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրիի սոցիալական օգնություն» ծրագրի մասին:
(Հովհաննես Մանուկյան)
7. Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2017-2018 թվականների ընթացքում իրականացվող ծրագրի մասին:
(Մարի-ժան Պարե)
8. «Հովարդ Կարապետյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2017 թվականի ընթացքում իրականացվող «ԼՂՀ-ում մասնագիտացված ցերեկային խնամքի կենտրոնի ստեղծում՝ առտիզմով և մանկական ուղեղային կաթվածով տառապող երեխաների համար» բարեգործական ծրագրի մասին:
(Լիանա Այդինյան)

9. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

- 9.1 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդափրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 2):
- 9.2 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 9.3 «Հայաստանի հանդրոփի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 9.4 «Շիրակի մարզի ըմբշամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 9.5 «Լևոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին:
- 9.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):
- 9.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 1 («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):
- 9.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ):
- 9.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 2 («Վորլդ Վիժն ինթերնեյշլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):
- 9.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 3-ի N Մ-318-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Շողիկ» հայկական բարեգործական կազմակերպություն):
- 9.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 13-ի N Մ-208-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Հայաստանի երիտասարդական հիմնադրամ):

10. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին (Արման Բարխուդարյան)

- 10.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N Մ-792-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):
- 10.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան»):
- 10.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին **N 1** (Հայաստանի մանուկների հիմնադրամ):
- 10.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին **N 1** («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ):
- 10.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 17-ի N Մ-136-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Դիլիջան Դեվելոպմենթ» հիմնադրամ):
- 10.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ):
- 10.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-017-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին **N 1** («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):
- 10.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին **N 1** («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

11. Այլ հարցեր

- 11.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 15-ի N Մ-486-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգելու մասին («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ):
- 11.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 1-ի N Մ-575-Ա որոշմամբ հաստատված ծրագրի ժամկետը երկարաձգելու մասին («Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան»):
- 11.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 29-ի N Մ-298-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (Հայաստանի մանուկների հիմնադրամ):
- 11.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 1-ի N Մ-597-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին (Հայաստանի մանուկների հիմնադրամ):
- 11.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-1005-Ա որոշմամբ հաստատված ծրագրում լրացում կատարելու մասին («Այբ» կրթական հիմնադրամ):
- 11.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ հաստատված ծրագրում լրացում կատարելու մասին («Այբ» կրթական հիմնադրամ):
- 11.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 17-ի N Մ-125-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):



մ. 4/5

մ. 4/5

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ
31 մարտի 2017 թվականի N Մ- -Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ,
ԿՈՎԿԱՍԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԽՈՍՐՈՎԻ ԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵ-
ԼՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 12.03.2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱ-
ՆԱԳՐԻ ԾՐԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2017 ԹՎԱԿԱՆԻ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի մարտի 15-ի և 29-ի NN 3/08.2/30072-17 ու 3/08.2/10668-17 գրությունները և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի 23-ի N 01.1/80-2/5148-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի 29-ի N 02/14/4903-17, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2017 թվականի մարտի 21-ի N 1/18.2/1665-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի 20-ի N 06/3-8/8920-17 ու Հայաստանի Հանրապետության Արարարի մարզպետի 2017 թվականի մարտի 22-ի N 1/7/2/1814-17 եզրակացությունները, **որոշում է.**


1. Բարեգործական դրակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 63,269,500 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին:



Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնարկի և «Նստրոմի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականին

1. Ծրագրի նպատակը	«Նստրոմի անտառ» պետական արգելոցում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակադրված պետական արգելոցի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Նստրոմի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը
2. Ծրագրի բարեգործական որակյան նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Կովկասի բնության հիմնարկում, Թուվանինֆստրասան 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա
4. Ծրագրի կատարողը	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արարատի մարզ, ք.Վերի
6. Ծրագրի բյուջեն	«Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն» Կովկասի բնության հիմնարկում ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Նստրոմի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի համար «Ալբա-Կրեյտ Լգրիկոլ Բանկ»-ում բացված հատուկ հաշվում՝ 63 269 500 ՀՀ դրամ): Ծայխեղի ուղղությունները և չափերը՝ ըստ կետ 10-ի:
7. Բարեգործություն ստացողը	«Նստրոմի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ, Արարատի մարզ, ք.Վերի 10.03.2017թ. - 31.12.2017թ.
8. Ծրագրի իրականացման տևողությունը	ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնարկի և «Նստրոմի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի ծրագիր՝
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	10.03.2017թ. - 31.12.2017թ. - 63 269 500 ՀՀ դրամ, այդ թվում՝

1. Տրամադրության կետերի ձեռքբերում (2-րդ, 3-րդ եռամսյակ) - 14 666,4 հազ. ՀՀ դրամ, այդ թվում՝																																	
<table border="1"> <thead> <tr> <th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th> <th>Չափի միավորը</th> <th>Ամբողջ քանակը (ծավալը)</th> <th>Ընդհանուր գումարը (հազար դրամով)</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Բնեզին «Ռեզուլար»</td> <td>լիտր</td> <td>18020</td> <td>6 036,7</td> </tr> <tr> <td>Դիզելային վառելիք</td> <td>լիտր</td> <td>5520</td> <td>1 766,4</td> </tr> <tr> <td>Սերվիս բնական գազ</td> <td>խմ</td> <td>2200</td> <td>4 400,0</td> </tr> <tr> <td>Հակասարխե հերոլկ</td> <td>լիտր</td> <td>100</td> <td>33,3</td> </tr> <tr> <td>Կուտակիչ մարտկոցներ</td> <td>հատ</td> <td>7</td> <td>210,0</td> </tr> <tr> <td>Ալտոմբենների անիվներ</td> <td>հատ</td> <td>32</td> <td>2 020,0</td> </tr> <tr> <td>Անիվների շղթաներ</td> <td>հատ</td> <td>8</td> <td>200,0</td> </tr> </tbody> </table>	Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)	Բնեզին «Ռեզուլար»	լիտր	18020	6 036,7	Դիզելային վառելիք	լիտր	5520	1 766,4	Սերվիս բնական գազ	խմ	2200	4 400,0	Հակասարխե հերոլկ	լիտր	100	33,3	Կուտակիչ մարտկոցներ	հատ	7	210,0	Ալտոմբենների անիվներ	հատ	32	2 020,0	Անիվների շղթաներ	հատ	8	200,0	
Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)																														
Բնեզին «Ռեզուլար»	լիտր	18020	6 036,7																														
Դիզելային վառելիք	լիտր	5520	1 766,4																														
Սերվիս բնական գազ	խմ	2200	4 400,0																														
Հակասարխե հերոլկ	լիտր	100	33,3																														
Կուտակիչ մարտկոցներ	հատ	7	210,0																														
Ալտոմբենների անիվներ	հատ	32	2 020,0																														
Անիվների շղթաներ	հատ	8	200,0																														
2. Ծնեքերի և շինությունների կառուցում (2-րդ, 3-րդ եռամսյակ) - 700,0 հազ. ՀՀ դրամ, այդ թվում՝																																	
<table border="1"> <thead> <tr> <th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th> <th>Չափի միավորը</th> <th>Ամբողջ քանակը (ծավալը)</th> <th>Ընդհանուր գումարը (հազար դրամով)</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Էկոտորիզի տարալարի տեղադրում</td> <td>դրամ</td> <td>1</td> <td>700,0</td> </tr> </tbody> </table>	Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)	Էկոտորիզի տարալարի տեղադրում	դրամ	1	700,0																									
Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)																														
Էկոտորիզի տարալարի տեղադրում	դրամ	1	700,0																														
3. Տրամադրության սարքավորումների ձեռքբերում (3-րդ, 4-րդ եռամսյակ) - 11 000,0 հազ. ՀՀ դրամ, այդ թվում՝																																	
<table border="1"> <thead> <tr> <th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th> <th>Չափի միավորը</th> <th>Ամբողջ քանակը (ծավալը)</th> <th>Ընդհանուր գումարը (հազար դրամով)</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Ամենագնաց ավտոմեքենաներ</td> <td>հատ</td> <td>2</td> <td>11 000,0</td> </tr> </tbody> </table>	Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)	Ամենագնաց ավտոմեքենաներ	հատ	2	11 000,0																									
Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)																														
Ամենագնաց ավտոմեքենաներ	հատ	2	11 000,0																														

20-4/1

20-4/1

4. Վարչական սարքավորումների ձեռքբերում (2-4-րդ եռամսյակ) – 2 850,0 հազ. ՀՀ դրամ, այդ թվում

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Պաշտպանիչ և անվտանգության հագուստ	դրամ	1	700,0
Հեռախոսակներ	հատ	5	1 100,0
Քարտարանային պահարաններ	հատ	1	900,0
Բազմաթոռ	հատ	1	150,0

5. Այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում (2-4-րդ եռամսյակ) - 6 005,1 հազ. ՀՀ դրամ, այդ թվում

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Գազի բայրներ	հատ	3	990,0
Սեղանի համակարգիչ	հատ	3	1 050,0
Տախչ սարք բազմաֆունկցիոնալ	հատ	3	750,0
Տեսահսկողության համակարգ	դրամ	1	3 215,1

6. Ծառայությունների ձեռքբերում (1-4-րդ եռամսյակ) – 5 782,0 հազ. ՀՀ դրամ, այդ թվում

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Էլեկտրաէներգիա	դրամ	1	2 150,0

20/4/15

10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

Գազամատակարարում	դրամ	1	1 000,0
Միջազգային եւ միջբարդաբային հեռախոսային կապի ծառայություններ	դրամ	1	700,0
Հանացանց	դրամ	1	50,0
Դոմեսային անվանումներ	դրամ	1	12,0
Վեր հոսքինգ	դրամ	1	30,0
Լավիզացիոն ծառայություն	դրամ	1	840,0
Կոմունալ ծառայություններ	դրամ	1	200,0
Անասնաբուժական ծառայություններ	դրամ	1	800,0

7. «խտրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի անձնակազմի լրացուցիչ վարձատրություն (խրախուսում, յուրաքանչյուր եռամսյակ) – 22 266,0 հազ. ՀՀ դրամ:

1. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանավերսում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 14 666,4 հազ. ՀՀ դրամ,
2. Շենքերի և շինությունների կառուցում (գործարքի շրջանավերսում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 700, 0 հազ. ՀՀ դրամ,
3. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանավերսում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 11 000,0 հազ. ՀՀ դրամ,
4. Վարչական սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանավերսում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 2 850,0 հազ. ՀՀ դրամ:
5. Այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանավերսում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 6 005,1 հազ. ՀՀ դրամ,
6. Ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանավերսում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 5 782,0 հազ. ՀՀ դրամ:

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը

1. Գրասենյակային պարագաներ - 150,0 ՀՀ դրամ
2. Համակարգչային տեխնիկա – 1 800,0 ՀՀ դրամ
3. Կոմունալ ծախսեր – 4 142,0 ՀՀ դրամ

20/4/15

21-4/1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 21-4/1 Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մեյիք-Աղայան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Կեք կայք՝ www.minfin.am

N 01.1/80-2/5148-17
23.03.17թ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 17.03.2017թ. N 15/15.4/6217-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ԶԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կառարող՝ Նոնա Կարապետյան
հեռ. 011 910-437

N 034/11768-17

<ul style="list-style-type: none"> • Էլեկտրաէներգիա - 2 150,0 • Գազամատակարարում - 1 000,0 • Միջազգային և միջբարձրային հեռախոսային կապի ծախսեր - 700,0 ՀՀ դրամ • Հանացանց - 50,0 ՀՀ դրամ • Դուրեմային անվանումներ - 12,0 ՀՀ դրամ • Վեր հուղիք - 30,0 ՀՀ դրամ • Կոմունալ ծախսեր - 200,0 ՀՀ դրամ 	<p>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և ՀՀ Արարատի մարզպետարանի հետ</p> <p>Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը</p>
	<p>12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p> <p>13. Ծրագրի արդյունավետության մեխանիզմների նկարագրությունը վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>



«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի տնօրենի և Հովակիմյան



մթ 4/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 Էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

29.03.17թ. N 02/14/4903-17

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան ՀՀ բնապահպանության նախարարության 2017 թվականի մարտի 28-ի 1/08.2/10668-17 գրության և ի լրումն մեր 2017 թվականի մարտի 22-ի 02/14/4425-17 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի» լրամշակված ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

N 025/12945-17
29.03.17թ



մթ 4/1

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության իր. Կառավարական տուն 3

“21” 03 2017թ.

N 025/18.2/1665-17

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ Ա. Տեր-Սիմոնյանին

Ի պատասխան Ձեր 17.03.2017թ. թիվ 15/15.4/6217-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքով՝

Ա. Խաչատրյան

N 005/11123-17
21.03.17թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

20.4/1

«20» 03 2017 թ.

No 06/3-8/8920-17

Ձեր No _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 17.03.2017թ.
թիվ 15/15.4/6217-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՍԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎԱՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

№ 044/11028-17
20.03.17թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

20.4/1

МАРЗПЕТ АРАРАТА

ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փ./60
Հեռ.՝ /0235/ 2-52-16, /010/ 28-60-23

№ 1/7/2/1814-17 22 03 2017թ.

Ձեր՝ № 15/15.4/6217-17
17.03.2017թ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Արարատի մարզպետարանում քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի» ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Ծրագիրը բարեգործական որակելու որոշման վերաբերյալ, Արարատի մարզպետարանը տալիս է իր դրական եզրակացությունը:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատ.՝ Հ. Տերտերյան
Հեռ.՝ /0235/ 2-51-09

№ 111/11628/17
20.03.17թ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

մարտի 2017 թվականի N Մ- - Ա
քաղ. երևան

21.4/2

**«ՍՈՐԱ» ՀԱՇՎԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՈՐԱ» ՏՆԱԿ» ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԽՆԱՄՔԻ ԵՎ ԺԱՄԱՆՑԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի -ի N /-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի -ի N 02/17, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի մարտի -ի N -17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի -ի N 06/3-8/-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**


1. Բարեգործական որակել «Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամի (Հայաստանի Հանրապետություն, քաղ. երևան, Նաիրի Զարյան 19, բն. 29 ՀՎՀՀ՝ 00128663) կողմից իրականացվող՝ 62,000,000 դրամ արժողությամբ «Սորս» տնակ» զարգացման, խնամքի և ժամանցի սոցիալական» ծրագիրը (կցվում է):

2. «Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



«Սորս» տնակ» զարգացման, խնամքի և ժամանցի սոցիալական» ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	<p>Ծրագրի հիմնական նպատակներն են</p> <ul style="list-style-type: none"> • Լրացնել Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաների սպասարկման ոլորտի որոշ բացեր: • Ստեղծել նոր մոդելի կենտրոն, որը ընդունված է որպես միջազգային փորձի արդյունավետ օրինակ: • Անվճար հիմունքներով իրականացնել 60 միջին ծանրության և առավել ծանր հաշմանդամություն ունեցող 80 երեխայի անդամաջ երկարատև վերականգնողական աշխատանքն ու զարգացումը, ցերեկային 4 ժամվա խնամքն ու ժամանցը՝ ազատ ժամանակ ստեղծել երեխային մշտապես խնամող մայրերի համար: <p>Ծրագրի Անհրաժեշտությունը: Սույն նախագծով նպատակ ունենք իրականացնելու բազմաֆունկցիոնալ ծավալուն մի ծրագիր, հաշմանդամության ամենատարբեր բարդ վիճակում գտնվող երեխաների համար, որոնք հիմնականում զրկված են մանկական պետական հաստատություններ հաճախելուց: Երեխան հնարավորություն է ունենում սեկվայրում ստանալու ավելի քան 9 տեսակի թերապիաներ:</p> <p>Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:</p>
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	<p>21.4/2</p>
3.	Բարեգործը	<p>«Քրոնիմետ» ԲՀ Հայաստան, Բրավարանական հասցե՝ 0070, Երևան, Այգեհտան, 5-րդ փողոց, 15 տուն (Կենտրոն վարչ. շրջան): Գործունեության հասցե՝ 4/6 Ամիրյան փ., Գրիպար բիզնես կենտրոն, 7-րդ հարկ ՀՎՀՀ 02600555 (45 մկ. դրամ) և անհատ բարեգործներ (17 մկ. դրամ):</p>
4.	Ծրագիրը կատարողը	<p>«Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամ ք.Երևան, Նաիրի Զարյան 19, բն. 29, ՀՎՀՀ՝ 00128663</p>

5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագրի իրականացման վայրն է ՀՀ, քաղաք Երևան, արաջինը, Կոմիտաս 49/2 և ծրագրի երկրորդ հիմնական մասը իրականացվելու է Երևան քաղաքի Լոռու Մարաշ 13, 38 տանը, սոցիալական բնագավառ:
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 62.000.000 (վաթսուսու երկու միլիոն) դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Ծրագրում ընդգրկված են սոցիալապես անապահով ընտանքների 2-14 տարեկան 140 հաշմանդամություն ունեցող երեխաներ և նրանց ընտանիքներ: 140 ընտանիք օգտվում է նշված բոլոր ծառայություններից լիովին անվճար:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	01 մարտ 2017թ. – 29 դեկտեմբերի 2017թ.
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>Ծրագիրը կրելու է շարունակական բնույթ:</p> <p>Ծրագիրը բաղկացած է 2 կենտրոններում աշխատանքներ իրականացնելու մասերից:</p> <p>Առաջինը 2016 թ-ին «Քրոնիանտ» ԲՀ-ի շնորհիվ սկիզբ առած ՄՈՒՄ հիմնադրամի ծրագրի շարունակությունն է: Այն է Կոմիտաս 49/2 հասցեով, Առողջապահության Ազգային ընտանիքում տարածքում իրականացվող երեխաների թերապևտիկ աշխատանքում ընդգրկել հաշմանդամություն ունեցող միջին վիճակի երեխաներին, որոնց անհրաժեշտ է օրական 2-3 անհատական թերապիա: Նրանք գրանցվելու են 2-3 անսով հաճախելու անհրաժեշտ անհատական թերապիաների և շարաթական 3 օր 1-2 ժամ գտնվելու են մեր կենտրոնում: Նրանց ապաստարկելու է կենտրոնում շաբաթը 5 օր աշխատող 4 մասնագետ՝ մանկավարժ/հոգեբան, լոգոպեդ, էրգոթերապիստ, կինեզաթերապիստ: Օրական վերականգնողական թերապիայի են մասնակցելու 12-15 երեխա յուրաքանչյուրը 3 տեսակ թերապիա ստնալով: Այսպիսով ամսական 30 երեխա ներգրավված կլինի:</p> <p>Ծրագրի երկրորդ հիմնական մասը, իրենից ներկայացնում է նոր կենտրոնի կազմավորում և երեխաների ամբողջ տարվա ապաստարկում Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաներին բազմալիցքային ծառայություններ մատուցելու նոր մոդելի ձևաչափով:</p> <p>Ծրագիրը իրականացնելու համար Երևան քաղաքի Լոռու Մարաշ համայնքում ընտրված է վարձակալությամբ ստեղծվող սեփական ընդարձակ եռահարկ հարմարավետ տուն բազով, լոգավազանով և այլնով: Ներքին տարածքի մակերեսը շուրջ 700 քմ է, արտաքինը՝ շուրջ 400 քմ, ինչը</p>



	<p>բավարարում է ծրագրի պահանջներին: Այստեղ հենարկեր է ստեղծել երեխաների բազմակողմանի ապաստարկման անհրաժեշտ միջավայր:</p> <p>Լոռքի տնակում իրականացվող ծրագրով նախատեսում է հետևյալը՝ կազմակերպել միջին վիճակի 10 երեխայի ամբողջատիկ թերապևտիկ զարգացնող պարապմունքներ շաբաթական 2 օր և արտաքին ծանր հաշմանդամություն ունեցող 80 երեխայի ամբողջ տարվա վերականգնողական աշխատանքն ու իրականացնել ցերեկային 4 ժամվա խնամքը, ժամանցը և կենցաղային, ասօրյա հնուությունների զարգացումը՝ հնարավորություն տալով խնամակալ ծնողին ամբողջ տարին շաբաթը 3 օր 4 ժամով թողնել երեխային կենտրոնում և գրեթե մի փոքր վայելել բնականոն կյանքի ընթացքը:</p> <p>Երեխաները այցելում են կենտրոնը, օրը մեջ օրական երկու հերթափոխով: Ցուրաքանչյուր հերթափոխը 18-20 երեխա, օրական ապաստարկվող շուրջ 40 երեխա: Այսպիսով գրանցված 4 հերթափոխ ենք ունենում՝ երեխաներին բաժանելով համապատասխան նրանց խնդիրների սպեկտրի: Առավել շատ ներգրավված են հենաշարժողական խնդիրներով երեխաները, բայց մեծ տոկոս է կազմում նաև մտավոր խնդիրներով, զարգացման խորը հասարակում կամ ատոսիզմ ունեցող երեխաներ:</p> <p>Ծրագրում ընդգրկված են սոցիալապես անապահով ընտանքների 2-14 տարեկան 140 հաշմանդամություն ունեցող երեխաներ և նրանց ընտանիքներ:</p> <p>Ծրագրի շրջանակներում իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Գույքի և ապրանքների ձեռք բերում (համակարգիչներ, սեղաններ, աթոռներ, կարի մեքենաներ, թերապևտիկ պարագաներ, սարքավորումներ) երեխաների ծնողների ուսուցումը կազմակերպելու համար, որպեսզի հետագայում նրանք ունենան որակավորում և որոշակիորեն կարողանան հոգալ իրենց երեխայի հետ կապված ծախսերը - Գույքի ձեռքբերում կամ ներմուծում թերապևտիկ պարագաներ, կանույթ, սարքավորումներ 4 290 000 դր 2. Ծառայությունների ձեռք բերում (կինեզաթերապիա և այլ) Արապտիվ սպորտ, ֆիզկուլտուրա և կինեզաթերապիա 16 000 000 դրամ <p>Անգլերեն լեզվի մասնագետ 2 000 000 դրամ Երաժշտի ծառայություններ 2 500 000 դրամ Հաշվապահական ծառայություններ 700 000 դրամ</p>
--	--

	<p>10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>3 Տան վարձակալության ծախսեր - 6 667 000 դրամ 4 Կոմունալ ծառայությունների ձեռք բերում - 2 500 000 դրամ, 5 Տրանսպորտային ծախսեր - 1 500 000 դրամ 6 Անձնակազմի (մասնագետներ՝ մեկ կազմի արժեքները - 25 843 000 դրամ) և ընդթերապիստ և այլն) աշխատավարձեր 25 843 000 դրամ Նախատեսվում է ձեռք բերել գույքի ձեռքբերումը՝ թրքապլանյի պորտաֆոլներ, կառույթ, սարքավորումներ 4 290 000 դր դրամ և կառույցի արժեքով: Նախատեսվում է նաև տարածքի վարձակալություն - 6 667 000 դրամ, կինեզոթերապիա, մարզումներ, արդաստիվ սպորտ և ֆիզկուլտուրա, անգլերեն լեզվի մասնագետ, երաժշտի և հաշվապահական ծառայությունների ձեռք բերման ծախսեր՝ 21 200 000 դրամ արժեքով, տրանսպորտային ծախսեր 1 500 000 և կոմունալ ծառայությունների ձեռք բերման ծախսեր՝ 2 500 000 դրամ արժեքով:</p>
	<p>11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</p>	<p>Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը հետևյալն են՝ Կոմունալ ծախսեր - միջինում 2 500 000 դրամ, Հաշվապահական ծառայություններ 700 000 դրամ:</p>
	<p>12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Համագործության ակնկալիքով դիմել ենք մի քանի արտասահմանյան և տեղական կազմակերպությունների և հիմնադրամների: Այս պահի դրությամբ համագործակցությունը քննարկման փուլում է այդ իսկ պատճառով չենք կարող նշել համագործակցող կազմակերպությունների ցանկ: Հարկ եղած դեպքում, երբ հաստատվի համագործակցությունը կից կներկայացնենք այդ մասին տեղեկություն:</p>
	<p>13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>	<p>Ծրագրի իրականացման ընթացքում վերահսկողությունը կիրականացվի «Մարս» հաշվանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամի կողմից, ինչպես նաև ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Բրոնխիմա» ԲՀ-ի կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համաժողով:</p>

2-4/2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Զ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Երև.՝ (+374 10) 800 033, ֆաքս՝ (+374 10) 800 132
Կեբ կայք՝ www.minfin.am

01.1/80-2/5619-17
30.03.17

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
27.03.2017թ. N 15/15.9/7280-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սորս» հաշվանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամի կողմից իրականացվող «Սորս» տնակ» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

(Signature)

ԱՏՈՄ ԶԱՆՁՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
հեռ. 011 910-437

039/13013-17

30.03.17



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ՁԲ-4/2

«22» 03 201 թ.

No ~~4/2017~~ 06/3-8/10114-17

Ձեր No _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 27.03.2017թ.
թիվ 15/15.9/7280-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և
նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամի կողմից իրականացվող «Սորս»
տնակ» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՍԻՄՈՆՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿՄ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎԱՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705

044/12522-17

28.03.17թ



ՁԲ-4/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

29.03.17թ N 02/14/4517-17թ

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կախարումն ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 27-ի
15/15.9/7280-17 հանձնարարականի հայտնում ենք, որ «Սորս» հաշմանդամություն
ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամի կողմից
իրականացվող «Սորս» Տնակ» ծրագրի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել,
մասնավորապես՝ ծրագրի 5-րդ կետում անհրաժեշտ է նշել ծրագրի իրականացման
ընթացակարգին վերաբերող դրույթներ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Ալյա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

035/12952-17

29.03.17թ

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Սորս» հաշմանդամություն ունեցող երեխաների և երանց ընտանիքների աջակցության հիմնադրամի կողմից իրականացվող «Սորս» տնակ» զարգացման, խմանքի և ժամանցի սոցիալական» ծրագրի մասին» որոշման նախագիծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Հիմնավորում	Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը
<p>«ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ</p> <p>Որոշման նախագիծ վերաբերյալ հայտնում ենք, որ ծրագրի որոշված անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ ծրագրի 5-րդ կետում անհրաժեշտ է նշել ծրագրի իրականացման բնագավառին վերաբերող դրույթներ:</p>	<p>խմբագրված ծրագիրը կցված է:</p>

2-4/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
մարտի 2017 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

2-4/3

«ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ-ՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՈՈՌԳԱՄԱՆ ԶՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտի -ի N 01.1/80-2/-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի -ի N 02/14/-17, Հայաստանի Հանրապետության փարածքային կառավարման և զարգացման նախարարության 2017 թվականի մարտի -ի N , Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի -ի N 06/3-8/-17 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2017 թվականի մարտի -ի N 01/-16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Չաքարիա Սարկավազ Քանաքեռցու 129/5, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 23,693,469.60 դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Գետափ համայնքում ոռոգման ջրագծի կառուցում» ծրագիրը (կցվում է):
2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ «Նյուայլաստ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09103261) 2017 թվականի փետրվարի 14-ին կնքված N 14/02-17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անհրաժեշտ ապրանքների մատակարարում և ջրագծի մոնտաժում՝ 23,693,469.60 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:
4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



Հաստատված է
 «Արջակ» սոցիալ բարեգործական հասարակական
 կազմակերպության տնօրեն Բ. Ադամյանի կողմից
 01.03.2017թ.

Գետափ համայնքում ոռոգման ջրագծի կառուցման ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրով նախատեսվում է 1584 մետր ոռոգման ջրագծի կառուցում, ինչը կապահովի համայնքի հողատարածքների ցանքերը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3.	Բարեգործը	Վիլդե Գանզեն ՆԿ (WILDE GANZEN) Heuvellaan 36-1217JN Hilversum -NEDERLAND
4.	Ծրագրի կատարողը	"Կամրջակ"ՄԲՀԿ-ն, իրավաբանական հասցե՝ քաղ. Երևան Զ Քանաքեռցու 129/5, Աշխ. Կոթլուծի 3-14/1, հեռ.՝ 516-044, ֆաքս՝ 56-13-03
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Գետափ գյուղ, բնագավառը համայնքային զարգացում:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 23.693,469.60 (Քսաներեք միլիոն վեց հարյուր իննսուն երեք հազար չորսհարյուրաթուան ինը դրամ վաթսուսն լուման)
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Գետափ գյուղի համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2017 թվականի Փետրվարի 14-ից մինչև Հուլիսի 30-ը

21 4/3

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Նյուպլաստ Գրուպ»ՓԲԸ հետ կնքվել է կապալի պայմանագիր խողովակների գնման և միացման աշխատանքները կատարելու համար: Համաձայն գյուղատնտիս գրության ջրագծի փուտերի փորումը և հնօվիցը կատարվելու է գյուղապետարանի միջոցներով:
10.	Ձեռք բերվող, ներմուծվող, ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Նյուպլաստ Գրուպ»ՓԲԸ հետ կնքվել է կապալի պայմանագիր խողովակների գնման և միացման աշխատանքները կատարելու համար: Պայմանագրի արժեքն է 23.693,469.60 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր	Կազմակերպչական ծախսեր:
12.	Համագործակցությունը, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում համագործակցելու ենք Գետափ գյուղի համայնքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է Գետափ գյուղի համայնքապետի կողմից և աշխատանքները կատարելուց հետո Հայաստանի, Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով կներկայացվի հաշվետվություն:



ՏՆԵՐԸ
 Ք. Գրեյֆ
 Ադամյան

21 4/3



1.4/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am
29.03.17 N 02/14/4915-17
Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 28-ի 15/15.1/7297-17 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Գետափ համայնքում ոռոգման ջրագծի կառուցում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

025/12953-17

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15



1.4/3

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության իր. Կառավարական տուն 3
" 30 03 " 2017թ.

N. 02/18.2/1913-17

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ Ս. Տեր-Սիմոնյանին

Ի պատրաստան Ձեր 28.03.2017թ. թիվ 15/15.1/7297-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Գետափ համայնքում ոռոգման ջրագծի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքով՝

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Կարգող՝ Նարինե Սարգսյան
Տարածքային ներդրումային քաղաքականության վարչություն
Հեռ.՝ 010 511 327

025/13026-17



21-4/3

28.03 2017թ.
No 06/3-8/10253-17
Ձեր No _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 28.03.2017թ.
թիվ 15/15.1/7297-17 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական
կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության
Արագածոտնի մարզի Գետափ համայնքում ոռոգման ջրագծի կառուցում» որոշման
նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՍԻՐՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

մարտի 2017 թվականի N Մ- -Ա
քաղ. երևան

21-4/4

«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱ-
ՆԱՅՎՈՂ «ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋՆԵԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2017 թվականի մարտի -ի N 01.1/80-2/-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի մարտի -ի N 06/3-8/-17, Հայաստանի
Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի մարտի -ի N 02/14/-17 և
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2017 թվականի մարտի -ի N 101/-17
եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է:**

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ.
Տաշիր, Զահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) իրականացվող՝ 4,700,668 դրամ ընդհանուր
արժողությամբ «Մանկապարտեզների մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպա-
տակով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանա-
գրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականաց-
ման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01261634) 2017 թվականի փետրվարի
17-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակա-
յին աթոռների և բազկաթոռների ձեռքբերում՝ 366,668 դրամի չափով, առանց ավելացված
արժեքի հարկի:

2) «Վեգա ուորլը» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02704414) 2017 թվականի փետրվարի 20-ին
կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռուստացույցի
ձեռքբերում՝ 121,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Վեգա ուորլը» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02704414) 2017 թվականի փետրվարի 20-ին
կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռուստացույցի
ձեռքբերում՝ 121,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

4) «Մազնոն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2017 թվականի փետրվարի 20-ին
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկական խաղահրա-

014/12553-12

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎԱՀԿ
Նաիրա Բեժանյան
Հեռ. 060544705

պարակի սարքավորումների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,046,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

